World Vision ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանում ապրող երեխաների և նրանց ընտանիքների կյանքում կորոնավիրուսի համավարակի ազդեցության արագ գնահատում, հունիս, 2020

Ամփոփ

Հայաստանում նոր կորոնավիրուսով վարակվածության առաջին դեպքը գրանցվեց 2020թ.-ի մարտի 1-ին: Վորլդ Վիժն Հայաստանն անմիջապես կազմակերպեց անհապաղ աջակցություն՝ տրամադրելով կարիքի մեջ հայտնված առավել խոցելի ընտանիքներին սննդի և հիգիենայի փաթեթներ:

Մարտ ամսից ի վեր Վորլդ Վիժն Հայաստանն աջակցել է ավելի քան **3,000** ընտանիքի Հայաստանի **6** մարզերում և մայրաքաղաք Երևանում: Վորլդ Վիժն Հայաստանը նաև տրամադրել է սարքավորումներ և ինտերնետ կապի հնարավորություն ծայրահեղ աղքատ ընտանիքներին:

Վորլդ Վիժն Հայաստանն իրականացրել է Հայաստանում ապրող երեխաների և նրանց ընտանիքների կյանքում կորոնավիրուսի համավարակի ազդեցության արագ գնահատում, որը նպատակ ունի բացահայտել այն հիմնական խնդիրները, որոնք առաջացել են համավարակի հետևանքով: Հիմնականում այս խնդիրները վերաբերում են ընտանիքների հիմնական կարիքները հոգալուն, համավարակի ընթացքում կրթական գործընթացի կազմակերպմանը, ներընտանեկան հարաբերություններին: Դրանց վերհանումը թույլ կտա կազմակերպությանը մշակել համարժեք արձագանք խնդիրների հաղթահարման համար:

Մեթոդաբանություն

- Գնահատումն իրականացվել է **Վորլդ Վիժն Հայաստանի ծրագրային բոլոր տարածքների ծայրահեղ աղքատ կամ խոցելի ընտանիքների շրջանում:**
- Ընդհանուր իրականացվել է **1,175** հարցազրույց, որից **66.9% (786) ԱԽ*** ընտանիքների շրջանում:
- Ծրագրի մակարդակում տվյալների հավաքագրումն իրականացվել է **95% վստահության մակարդակ** և **5%** սխալի սահմանաչափ ունեցող ընտրանքով:
- ԱԽ* ընտանիքների մակարդակում տվյալների հավաքագրումն իրականացվել է **95% վստահության մակարդակ** և **7%** սխալի սահմանաչափ ունեցող ընտրանքով:

Ժողովրդագրական տվյալներ



Ընդհանուր 1,175

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Տնտեսություն 1,175
Անհատներ 6,333

- Երեխաներ (0-18) 3,118
- Կանայք 1,908

ՏԱՐԻՔԸ

- 36-60-**54.7%**
- 26-35-**40.7%**
- 18-25-**2.3%**
- > 60-**2.3%**

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

113 (9.6%) ընտանիք, որտեղ ապրում է հաշմանդամություն ունեցող երեխա

287 (24.4%) ընտանիք, որտեղ ապրում է հաշմանդամություն ունեցող մեծահասակ

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

76.3 %	9.7 %	2.9 %	5.7 %	5.4 %
պատկանում է ընտանիքներին	ընտանիքը վարձակալում է	ապրում է տնակում	ապրում է բարեկամների հետ	այլ

*ԱԽ – առավել խոցելի

World Vision ՀԱՅԱՍՏԱՆ

13.8% ընտանիքներում դպրոցահասակ երեխաները չեն մասնակցում հեռավար դասերին, նրանցից

88% չեն մասնակցում անհրաժեշտ տեխնիկական սարքերի բացակայության պատճառով

78.7% չեն մասնակցում ինտերնետ կապով ապահովված չլինելու պատճառով

Հաշմանդամություն

28.6% ընտանիքներում, որտեղ ապրում են հաշմանդամություն ունեցող երեխաներ, երեխաները չեն մասնակցում հեռավար դասերին

55.1% դեպքերում Անհատական զարգացման պլանը չի իրականացվում այնպես, ինչպես սահմանափակումներից առաջ

77.6% դեպքերում Անհատական զարգացման պլանում սահմանված նպատակները չեն վերանայվել համավարակի ընթացքում

Առցանց կրթության հարթակները

Ամենահաճախ օգտագործվող հարթակները

Viber
59.5%
(645 ընտանիք)

Zoom
43.4%
(470 ընտանիք)

Ավելի հազվադեպ օգտագործվող հարթակները

Messenger
18.5%
(200 ընտանիք)

Հեռախոս
13.1%
(142 ընտանիք)

Սոցիալ-հոգեբանական աջակցություն դպրոցից

Հարցված ընտանիքներում երեխաների **78%** համավարակի ընթացքում չի ստացել սոցիալ-հոգեբանական աջակցություն դպրոցից

Կրթության որակը համավարակի ընթացքում

Հարցվածների **41.8%** կարծում է, որ հեռավար կրթության որակը համավարակի ընթացքում եղել է վատ կամ շատ վատ

Ընտանիքների կողմից ակնկալվող միջոցառումները համավարակի ընթացքում կրթության որակը բարելավելու համար

57.4%
կարծում է, որ անհրաժեշտ է տրամադրել թվային սարքեր (հեռախոսներ, պլանշետներ) կրթության որակը բարձրացնելու համար

45.7%
կարծում է, որ անհրաժեշտ է իրենց ապահովել ինտերնետ կապով կրթության որակը բարձրացնելու համար

28%
կարծում է, որ անհրաժեշտ է տրամադրել դպրոցական պարագաներ կրթության որակը բարձրացնելու համար

World Vision
ՀԱՅԱՍՏԱՆ

Ապրուստի միջոցներ

Եկամտի աղբյուրները նախքան համավարակը և համավարակի բռնկումից

1 Անկանոն (օրավարձով) աշխատանք

Նախքան COVID-19
Ամեն 4-րդ ընտանիքը եկամուտ էր ստանում անկանոն (օրավարձով) աշխատանքից

COVID-19 բռնկումից հետո
Ամեն 10-րդ ընտանիքն է ստանում եկամուտ անկանոն (օրավարձով) աշխատանքից

2 Արտագնա աշխատանք

Նախքան COVID-19
100 ընտանիքից 25-ը եկամուտ էին ստանում արտագնա աշխատանքից

COVID-19 բռնկումից հետո
100 ընտանիքից 5-ն է արտագնա աշխատանքից եկամուտ ստանում

3 Բարեգործական օգնություն

Նախքան COVID-19
100 ընտանիքից 13-ն ստանում էին օգնություն կազմակերպություններից

COVID-19 բռնկումից հետո
100 ընտանիքից 24-ն են ստանում օգնություն կազմակերպություններից

4 Եկամուտ առևտրից

COVID-19 բռնկումից հետո
Առևտրից ստացվող եկամուտը նվազել է երկու անգամ

5 Դրամական փոխանցումներ

COVID-19 բռնկումից հետո
Յուրաքանչյուր 2-րդ ընտանիքը, որ ստանում էր գումար դրամական փոխանցումների միջոցով, այլևս չի ստանում

COVID-19 համավարակի ազդեցությունը

46.7%-ի աշխատանքը տուժել է COVID-19 բռնկումից հետո

Հարցվածների **44.6%**-ի տնտեսական վիճակը տուժել է COVID-19 բռնկումից հետո

Հարցվածների միայն **25%** -ը որևէ կերպ չի տուժել COVID-19 բռնկումից հետո

Տեղեկացվածությունը COVID-19 կանխարգելման և տարածման ուղիների վերաբերյալ

Հարցվածների ավելի քան **90%** քաջատեղյակ են, թե ինչպես է COVID-19 փոխանցվում մեկից մյուսին, և որոնք են կանխարգելման ուղիները

Աջակցության ծրագրեր

Հարցվածների **54.1%** ինչ-որ կերպ օգտվել է աջակցության ծրագրերից

Եկեղեցի

Ընտանիքների **13.2%** աջակցություն է ստացել տեղի եկեղեցուց (սննդի և հիգիենայի փաթեթներ, հոգեբանական աջակցություն) COVID-19 բռնկումից հետո

Ռիսկեր

Ծնողների **91%** կարծում է, որ իրենց երեխան մի փոքր կամ ավելի շատ է առնչվում համացանցի ռիսկերի հետ, երբ օգտվում է համակարգչից, պլանշետից, բջջային հեռախոսից

Ընտանիքների կողմից ակնկալվող անհրաժեշտ և բացակայող միջոցներ, որպեսզի հաշմանդամություն ունեցող մարդիկ ստանան տեղեկատվություն COVID-19 մասին

28.5%
կարծում է, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց անհրաժեշտ են պարզ և մատչելի տեղեկատվական նյութեր

16.2%
կարծում է, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց անհրաժեշտ են աուդիո և վիդեոնյութեր

15%
կարծում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ են տեսանյութեր՝ ժեստերի լեզվով

World Vision
ՀԱՅԱՍՏԱՆ

Հիմնական կարիքները հոգալու կարողություն

Ընտանիքների 82.8% մասամբ է կարողանում կամ ընդհանրապես չի կարողանում հոգալ **սննդի կարիքները**

Ընտանիքների 76.7% մասամբ է կարողանում կամ ընդհանրապես չի կարողանում հոգալ **ախտահանիչ նյութերի, դիմակների և ձեռնոցների ամենօրյա օգտագործման կարիքը**

Ընտանիքների **76.7%** մասամբ է կարողանում կամ ընդհանրապես չի կարողանում հոգալ **բջջային հեռախոսների կամ համակարգիչների կարիքը,** որպեսզի երեխաները կարողանան սովորել և մասնակցել հեռավար դասերին

Ընտանիքների 70.7% մասամբ է կարողանում կամ ընդհանրապես չի կարողանում հոգալ **դպրոցական պարագաների կարիքը (գրիչ, ներկ, տետրակ, քանոն, թուղթ և այլն)**

Ընտանիքների 67.6% մասամբ է կարողանում կամ ընդհանրապես չի կարողանում հոգալ **օճառի, մաքրող միջոցների, հագուստ և սպասք լվանալու միջոցների կարիքը**

Ընտանիքների կողմից ակնկալվող աջակցությունը

65.1% առաջարկում է բաժանել սննդի փաթեթներ

47.6% առաջարկում է բաժանել բժշկական և հիգիենիկ պարագաներ

46.6% առաջարկում է բաժանել տեխնիկական սարքավորումներ

Հարաբերություններ

64.4%

Ծնողներն իրենց երեխաների նկատմամբ կիրառում են դաստիարակության առնվազն 1 բռնի մեթոդ համավարակի բռնկումից հետո

58.8%

Համավարակի բռնկումից հետո տանը փակված վիճակում հարցվածներն իրենց զգում են նյարդայնացած, ընկճված կամ անհանգիստ

75.5%

Հարցվածներն ունեն անորոշության զգացում համավարակի, դրա հետևանքների և տևողության վերաբերյալ

Ընտանիքների կողմից ակնկալվող աջակցությունն՝ ուղղված հարաբերությունների բարելավմանը

26.1% առաջարկում է տրամադրել երեխաների հետ ժամանցի մասին նյութեր

16.9% առաջարկում է աջակցել ընտանեկան ժամանցի այլընտրանքային տարբերակներով

10.6% առաջարկում է տրամադրել առցանց սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն երեխաների և ծնողների համար

Տեխնիկայի կիրառություն

- **19.1%** չունի որևէ սարքավորում
- **80.9%** օգտագործում է



- **71.3%** բջջային հեռախոս
- **21.9%** համակարգիչ
- **5.1%** պլանշետ

Միայն **8.7%** է օգտագործում առցանց վճարային ծառայություններ

Միայն **15.7%** է օգտվում կառավարության էլեկտրոնային ծառայություններից (e-gov.am)